ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Ն Ա Խ Ա Գ Ա Հ Ի Տ Ե Ղ Ա Կ Ա Լ

0023, ք. Երևան, Արշակունյաց 7,
☎ + (37460)474144, 474131, 474106

_____№ _____

Ձեր_____ առ _____

<<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>>
ՀԿ նախագահ Լ. Դոյդոյանին
(ք. Երևան, Բուզանդի 1/3)

Ի պատասխան Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե հասցեագրված Ձեր 23.02.2016թ. թիվ 269 գրության՝ հայտնում ենք, որ 2016 թվականի հունվարի 1-ից առ այսօր ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում (http://cadastre.am/feedback) տեղադրված էլեկտրոնային փոստի (info@cadastre.am) հասցեին ուղարկվել է շուրջ 50 հարցում, որոնց բոլորին տրվել է գրավոր պատասխան (մերժում, վերահասցեագրում չկա):

Միաժամանակ հայտնում ենք, որ յուրաքանչյուր տարի ամփոփվում և թարմացվում է կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի տեղեկատու բաժնի՝ «Հաճախակի տրվող հարցեր» պատուհանը (http://www.cadastre.am/page/392): Այն բաղկացած է 65 հարց ու պատասխանից, որն իր մեջ ներառում է ամբողջական տեղեկատվություն կադաստրի պետական կոմիտեի կողմից իրականացվող ընթացիկ և ծրագրային աշխատանքների վերաբերյալ: Հարցերն առնչվում են կադաստրի պետական կոմիտեի այն գործառույթներին, որոնք առավելապես հետաքրքրում են քաղաքացիներին: «Հաճախակի տրվող հարցեր» պատուհանի գլխավոր նպատակն է հարց ու պատասխանի եղանակով քաղաքացիներին հուզող հարցերի պարզ, մատչելի և ըմբռնելի ներկայացումը, միաժամանակ առավել հանգամանալից ներկայացնելով

այն բոլոր բարեփոխումները, որոնք իրականացվել են ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ համակարգում՝ քաղաքացիների սպասարկման որակի բարելավման ուղղությամբ:

Դ.Սեդրակյան

Կատարողներ
Լ. Ավետիսյան
Հեռ. 060 47-42-21
Լ.Նազարյան
Հեռ. 060 47-41-09